Granatus Ventures-ը, CIVITTA-ի հետ համատեղ և PMI Science-ի աջակցությամբ՝ ուրախ է հայտարարել «Գիտնականից՝ ձեռներեց» ծրագրի և իր առաջին բութքեմփի մեկնարկը:

Եթե զբաղվում եք գիտահետազոտական աշխատանքներով կամ գիտական գաղափարների վրա հիմնված ձեռներեցությամբ, ցանկանում եք Ձեր հետազոտական աշխատանքները զարգացնել լիովին նոր ուղղությամբ և դիտարկել դրանց հնարավոր առևտրայնացումը, սիրով հրավիրում ենք մասնակցելու «Գիտնականից՝ ձեռներեց» ծրագրին: Ծրագիրը բաղկացած է երկու փուլից, առաջին՝ ներածական **"Discovery Bootcamp",** որի հաջողակ մասնակիցներն այնուհետ կկարողանան մասնակցել ավելի խորացված **"Impact Bootcamp"-ի փուլին**:

Տրամադրելով հաջող բիզնես ստեղծելու համար անհրաժեշտ հիմնարար գիտելիքներ, հմտություններ և ռեսուրսներ՝ բութքեմփի նպատակն է նպաստել ձեր գիտական գաղափարների հաջող առևտրայնացման աշխատանքներին:

Խոսնակների մասին՝

Պրոֆեսոր Չարլզ Լ. Կունին Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի քիմիական տեխնոլոգիաների բաժնի քիմիական և կենսաքիմիական գիտությունների պրոֆեսոր է և Դեշպանդե տեխնոլոգիական նորարարությունների կենտրոնի հիմնադիր տնօրենը: Պրոֆեսոր Կունին բազմաթիվ կենսատեխնոլոգիական և դեղագործական ձեռնարկությունների խորհրդի անդամ և խորհրդատու է: 2004-2006թթ. նաև ղեկավարել է ԱՄՆ սննդամթերքի և դեղերի վարչության դեղագործության խորհրդատվական կոմիտեն: Պրոֆեսոր Կունիի հետազոտական հիմնական ուղղություններն են կենսաբանական տեխնոլոգիաները և դեղագործությունը: Նա ավելի քան 250 գիտական հոդվածների և 25 պատենտների հեղինակ է, 5 գրքի համահեղինակ և խմբագիր, այդ թվում՝ բութքեմփի հիմքում ընկած «Adaptive Innovation: An Entrepreneur's Guide To Technology Innovation» գիրքը:

Հովարդ Կալիֆանոն ղեկավարում է Սինգապուր-Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարան դաշինքի նորարարությունների կենտրոնը (SMART - Singapore-MIT Alliance for Research and Technology): Նրա փորձառությունը ակադեմիական, մասնագիտական և ֆինանսական ոլորտներում է՝ նոր տեխնոլոգիաների առևտրայնացման ուղղությամբ: Նա հիմնադրել և ղեկավարել է ասիական և ամերիկյան բազմազան ձեռնարկություններ: Նաև եղել է Ջոնս Հոփկինսի համալսարանի սինգապուրյան մասնաճյուղի գործադիր տնօրենը և ղեկավարել է 80 հետազոտողներից և բժիշկներից բաղկացած թիմը: 1995-1999 թվականներին զբաղեցրել է Ջոնս Հոփկինսի համալսարանի դեղագործության ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը, որի շրջանակներում զբաղվել է բիզնեսի զարգացմամբ:

Հրավիրյալ բանախոսներ՝ գիտահեն հաջողակ ընկերությունների հիմնադիրներ ամբողջ աշխարհից:

Ինչ կարող եք ակնկալել՝ մասնակցելով բութքեմփին

Ծանոթություն **Adaptive Innovation հայեցակարգի** հիմնական գաղափարներին հենց հեղինակների՝ Չարլզ Կունիի և Հովարդ Կալիֆանոյի կողմից:

Ոլորտի առաջատարներից, հաջողակ ձեռնարկատերերից և գիտնականներից սովորելու և վերջիններիս փորձառությանը ծանոթանալու հնարավորություն:

Ինտերակտիվ սեմինարների միջոցով պրակտիկ փորձ ստանալու հնարավորություն:

Արժեքավոր ծանոթություններ ու շփումներ ունենալու հնարավորություն հեռանկարային գործընկեր հետազոտողների, համագործակիցների և ներդրողների հետ, ովքեր կարող են օգնել կյանքի կոչել ձեր նախագիծը:

Նախագծերի մրցույթի մասնակցելու հնարավորություն՝ ներկայացրեք ձեր նախագիծը մեր մրցույթում՝ պոտենցիալ ներդրողների հետ ծանոթանալու և հաջորդ փուլ՝ ավելի խորացված **"Impact Bootcamp"** անցնելու հնարավորության համար:

Ծրագրի մասին՝
Ամսաթիվ՝ հոկտեմբերի 16-17, 2023
Վայր՝ ISTC հիմնադրամ
Լեզու՝ անգլերեն

Գրանցվե՛ք այստեղ մինչև հոկտեմբերի 9-ը ներառյալ:

Մասնակցեք բութքեմփին և արագացրեք գիտական հետազոտությունից մինչ հաջողակ բիզնես ընկած ճանապարհը, ինչպես նաև նպաստեք նորարարության տարածմանը Հայաստանում: